# Թանգարանները համագործակցում են Վիքիպեդիայի հետ՝
## ներկայացնելով կուրատորական գիտելիքը աշխարհին

**ԳԼԱՄ-Վիքի նախաձեռնությունը (անգլերեն՝ GLAM-Wiki, պատկերասրահներ, գրադարաններ, արխիվներ, թանգարաններ և Վիքիպեդիա) օգնում է մշակութային հաստատություններին՝ համագործակցելով Վիքիպեդիայի փորձառու խմբագիրների հետ, ներկայանալ աշխարհին: Սա մշակութային ժառանգության պահապաններին իրենց հավաքածուները մարդկանց նոր խմբերի ներկայացնելու անգնահատելի հնարավորություն է:**

*Վիքիպեդիան հրաշալի միջավայր է՝ գիտելիքի ծարավ և իրենց 1 նվիրված հետազոտողների և գիտնականների համար, նրանց համար, ովքեր կարևորում են գիտելիքը բոլորին հասանելի դարձնելու անհրաժեշտությունը:*

**ՆինաՍիմոն, ՍանտաԿրուզի Արվեստի և պատմության թանգարանի տնօրեն, «Թանգարան 2.0» նախագիծ**

Բրիտանական թանգարանի հոլանդական և ֆլամանդակա փորագրությունների և գծանկարների բաժնի հերթապահապանը

Վիքիպեդիայից ամեն օր օգտվում են միլիոնավոր ընթերցողներ, այն ներառում է ավելի քան 20 մլն հոդված՝ ավելի քան 280 լեզվով: Նրա բովանդակությունը ստեղծվում և խմբագրվում է աշխարհի տարբեր ծայրերում գտնվող հազարավոր նվիրյալ կամավոր «վիքիպեդիացիների» կողմից: Վիքիպեդիայից օգտվում են բոլորը՝ գիտահետազոտողից մինչև ուսանող և պարզապես հետաքրքրասեր: Ըստ կանխատեսումների՝ 2015 թվականին Վիքիպեդիան կունենա ավելի քան 50 մլն հոդված և 1 մլրդ ընթերցող:

Վիքիպեդիայի համայնքը պատրաստակամ է օգնել հաստատություններին՝ բարելավել իրենց հավաքածուներին վերաբերող առցանց հոդվածները: Համագործակցության ընթացքում վիքիհամայնքի մեկ կամ երկու ներկայացուցիչ կարող են մշտական կապ պահպանել որևէ մշակութային հաստատության հետ՝ պլանավորելու և համակարգելու, թե ինչպես կարող է այն առավել ներկայացված լինել Վիքիպեդիայում: Մշակութային հաստատությանը կցված վիքիպեդիացիները՝ թանգարանի աշխատակիցների հետ համատեղ, կարող են. բարելավել Վիքիպիեդիայի համապատասխան հոդվածները, պատրաստել թույլատրագրեր, լուսանկարներ և այլ մուլտիմեդիա հավաքածուներ՝ Վիքիպահեստում տեղադրելու համար, կազմակերպել այցեր/միջոցառումներ (օրինակ՝ էքսկուրսիաներ վիքի-խմբագիրների համար կամ մրցույթներ, որոնք ավելի մեծ թվով վիքի-խմբագիրներ կներգրավեն):

Երկուստեք օգտակար այս համագործակցությունն օժանդակում է ԳԼԱՄ-հաստատության և Վիքիպեդիայի հնարավորությունների փոխօգտագործումը՝ որպես երկարաժամկետ շարունակական համագործակցության սկիզբ: Վիքիպեդիան հարթակ է՝ թանգարանի ամբարած գիտելիքն ու ինֆորմացիան տանելու այնտեղ, որտեղ մարդիկ են:

*Թանգարաններն ունեն տեղեկատվություն և փաստաթղթեր, իսկ Վիքիպեդիան՝ համընդանուր հասանելիություն և շրջանառություն, որոնց իր ուժերով չի հասնի և ոչ մի թանգարան:*

**— Ժոզեֆ Սեռա, Պիկասոյի բրիտանական թանգարանի տնօրեն**

## Լուսաբանումը մամուլում

**How Wikipedians-in-Residence Are Opening Up Cultural Institutions,** *The Atlantic (16-06-2011)*

**Venerable British Museum Enlists in the Wikipedia Revolution,** *The New York Times (04-06-2010)*

**Smithsonian and Wikipedians Team up for Edit-a-thon,** *The Chronicle of Philanthropy (11-08-2011)*

## Հաջողված պատմություններ

*[Մեկ հետ համագործակցող վիքիպեդիացին] մեկ մոտ անհավանական աշխատանք էտարել՝ սովորեցնելով և ինքնավստահություն ներշնչելով մեկ բոլորիս, ինչպես նաև ցույց տալով Վիքիպեդիայի ներուժը:*

**— Դեյվիդ Ֆերիերո, ԱՄՆ Ազգային արխիվի և գրանցումների վարչության արխիվարիուս**

**ԳԼԱՄ վիճակագրություն (2010-2011)**

**Բեռնված պատկերներ**
**194.000+**

**Միջոցառումներ աշխարհում**
**76**

**Համալրված հոդվածներ**
**2000+ ավելի քան 50 լեզվով**

### Բրիտանական թանգարան, Լոնդոն

2010 թվականին Լիամ Վիաթը Բրիտանական թանգարանի հետ համագործակցող առաջին վիքիպեդիացին էր: Նա մեկ ամսվա ընթացքում հիմք դրեց միջազգային ԳԼԱՄ-Վիքի նախաձեռնությանը: Արդյունքում, թանգարանի աշխատակիցներն ու տեղացի վիքի-խմբագիրները միահամուռ ուժերով Վիքիպեդիայում նյութեր ավելացրին Բրիտանական թանգարանի կարևոր նմուշների մասին, ինչպես «Ռոզեթյան քարը» և «Հոքսնի գանձը»:

### Ամերիկյան արվեստի Սմիթսոնյան արխիվներ

Սառա Սթիրչը (թանգարանային գործի մագիստրանտ և վիքի-խմբագիր) Ամերիկյան արվեստի Սմիթսոնյան արխիվների հետ ԳԼԱՄ-համագործակցության ընթացքում դասընթացներ է անցկացրել արխիվացման գործընթացի և հետազոտական նյութերի մասին՝ ինչպես տեղում, այնպես էլ առցանց: Նա մշակել է «Էլեկտրոնային կամավորության» ծրագիրը՝ ներգրավելով 39 վիքի-խմբագիրներ ամբողջ աշխարհից: Թանգարան այցի ժամանակ աշխատակիցներից տեղեկանալով արխիվացման աշխատանքի մասին՝ տեղացի վիքի-խմբագիրները մասնակցեցին «խմբագրական մարաթոնի» և օգտագործելով Սմիթսոնյան նյութերը՝ ստեղծեցին նոր հոդվածներ:

### Ինդիանապոլիսի մանկական թանգարան

Աշխարհի խոշորագույն մանկական թանգարանում իրականացվել է ամենաերկարատև ԳԼԱՄ-համագործակցությունը՝ սկսած 2010 թվականից: Վիքի-խմբագիր Լորի Ֆիլիպսի մշակած նորարարական միջսերնդային Վիքիպեդիա-ծրագրերը լավագույն փորձի և պիլոտային ծրագրերի հիմք դարձան: Օրինակ՝ նա իրականացրել է QR կոդի ծրագիր, որով պիտակվել են թանգարանի ակնառու ցուցանմուշները, ինչպես, օրինակ ,թանգարանի աշխարհահռչակ կարուսելը կամ Բաքի անունը կրող տիրանոզավրը: Այցելուն հեռախոսով տեսագրելով QR կոդը՝ կարող է կարդալ ցուցանմուշի մասին Վիքիպեդիայում՝ իր ցանկացած լեզվով:

### Արխիվների և փաստաթղթերի ազգային վարչություն (NARA)

ԱՄՆ Արխիվների և փաստաթղերի ազգային վարչությունը համագործակցություն է սկսել վիքիպեդիացի Դոմինիկ Մաքդեվիթ–Փարքսի հետ: Նա օգնել է առցանց հասանելի դարձնել ԱՄՆ կառավարության արխիվների մի զգալի մասը, համակարգել է ավելի քան 13.423 պատկերների բեռնումը, այդ թվում՝ աշխարհահռչակ լուսանկարիչ Անսել Ադամսի աշխատանքները: Այդ պատկերները օգտագործվել են Վիքիմեդիա նախագծերի հարյուրավոր լեզուներով հոդվածներում: NARA–ն անց է կացրել նաև «տեսածրման հաքաթոններ» (scan-a-thon), որոնց ժամանակ Կոլումբիայի դաշնային շրջանի վիքիպեդիացիները թվայնացրել են արխիվային հավաքածուները:

### Պիկասոյի թանգարան, Բարսելոնա

Պիկասոյի թանգարանը 2011 թվականին համագործակցություն է սկսել վիքիպեդիացի Ալեքս Ինոխոյի հետ: Թանգարանի անձնակազմի և կամավորների հետ իրականացված հանրային իրազեկման ծրագրերի շարքում նա մեկ ամիս համագործակցել է թանգարանի գրադարանավարի և համադրողի հետ՝ բարելավելու համար Վիքիպեդիայում Պաբլո Պիկասոյի «Մենինների»՝ 58 նկարներից բաղկացած շարքի մասին կատալոներեն հոդվածը: Այս «ընտրյալ» հոդվածն այժմ «Մենիններ» ստեղծագործության մասին ամենահարուստ առցանց աղբյուրն է:

## Հետադարձ կապ

**«Վիքիմեդիա Հայաստան»**
գիտակրթական-հասարակական կազմակերպություն

Կայք www.wikimedia.am
Էլ. փոստ glam@wikimedia.am
Թվիթեր @wikimedia_am
Ֆեյսբուք facebook.com/WikimediaArmenia
Հեռախոս 010 575397

IMAGE LICENSE INFORMATION (February 2012)
In order of appearance:
GLAM logo transparent by User:PKM / CC-BY-SA 3.0 Unported (http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)
An Van Camp with Dürer block by User:Fae/ CC-BY-SA 3.0 Unported (http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)
Wikimania-2011-glamcrew by User:Fuzheado / CC-BY-SA 3.0 Unported (http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)
Captain Kidd's Cannon QRpedia Label by The Children's Museum of Indianapolis / CC-BY-SA 2.0 Generic (http://creativecommons.org/licenses/by-sa/2.0) / Attribution: The Children's Museum of Indianapolis
This work is licensed under a CC-BY-SA 3.0 Unported license. Please attribute "GLAM-Wiki US." To view a copy of this license, visit http://creativecommons.org/licenses/by-sa/3.0